

Վայէ որ աչկերսներուդ հետ տարբեր՝ ուրիշներուն հետ տարբեր չըլլայ վարմունքդ, ոչ աղէկ բաներու և ոչ գէշ բաներու մէջ:

Տղոց հետ նայէ որ կարճ խօսիս, բայց չկրմկրմաս:

Մտադար երես տալը տղուն ապշուածիւն կրբերէ. անդադար վար զարնելն ալ տղուն կամքը կրխստացրնէ:

Արբեմն տղուն սիրտը բարի նախանձով վառելու համար՝ ուրիշ տղոց աղէկութիւնը իր առջևը գովելը գէշ է. բայց շատ զգուշալի բան է տղոց ջանքը վառելու համար՝ անդադար իրարու նախանձեցրնելը. ապա թէ ոչ, մէկ բարիք մը ընեմ՝ ըսելով՝ հազար չարեաց պատճառ կ'ըլլաս՝ տղուն բարի բարի բնաւորութիւնները աւրելով:

Յայտնի գովեստը ծածուկ գովեստէն աւելի օգտակար է տղուն. իսկ ծածուկ յանդիմանութիւր աւելի օգտակար է քան թէ յայտնին:

Վոր մարդու մը առջև տղուն վրայ գովեստ խօսիլը շատ օգտակար բան է. վասն զի տղան անով սիրտ կ'առնէ ու աղէկ ըլլալու ջանք կ'ընէ:

Տղուն պարծենկոտութիւնը կ'ուզես շտկել նէ՝ մի պատժեր, մի յանդիմաներ, հասպա միայն պատասխան մի տար:

Թէ որ կ'ուզես տղուն աղէկ կրթութութիւն տալ, նայէ որ աւիթ ունենայ ոչ միայն իր հասակակիցներուն հետ վարուելու, հասպա նաև իրմէ մեծերուն ու պզտիկներուն հետ ալ վարուի. այնպէս որ կերպով մը մեծ կենցաղավարութիւններուն պզտիկ ճաշակը առնէ: Վայէ որ մեծերուն հետ սիրով ու պատկառանք վարուի, պզտիկներուն հետ քաղցրութեամբ ու ծանրութեամբ:

Վուզես որ տղուն առջևը պատկառելի ըլլաս, նայէ որ տղուն առջևը ամենուն պատիւը պահես:

Ի Ռարբարս, 'ի Սարարս և 'ի Հեռուոյս Իմաստութեան Ըջփէս Հայաստանէացի:

ԻԱՐԵ... բոլորեցաւ ուրեմն փուլ թանակի և միւս ևս բազմարկածեան շրջան արեգական. ցնորք ինչ ըմբռնիցեն զիս, եթէ արդարև 'ի նոր հասաք օր հանդիսի. օր՝ յորում զգովանդակ վաստակոց տարւոյն համարիմք զարդիւնս, օր տօնական գեղածիծաղ հնձոց իմաստութեան, զորոյ զոսկենշոյլ հասկացն ծածանմունս ընդ ահ ընդ ահ յուսոյն շնչել՝ նկատեաք յեզր անդաստանիս կացեալ բանաւորի, 'ի նժարս մտաց կշռելով զորայիցն բարդութիւն. և արդ գոհացող սրտիւք ամբառնայցեմք զձեռս յերկինս առ տուիչն բարեաց՝ խանդաղակաթ արտասուօք թանալով զգեղեցկանսի՛հ արդիւնսն որ առաջիս մերկայ: Ա՛յ, ո՛չ խաբիմ. ո՛չ խաբիք Հարբ իմ յարգոյք և եղբարք պատուականք և համօրէն ժողովդ գերապանծ հայրենասէր խմբի. ստուգապէս հրաւիրէ զմեզ սերկեանս տիւ ցնծալ պարել 'ի տօնս ամանորաբերս հնձոց երկանց մերոց 'ի դաշտս իմաստութեան: Ա՛յ արշաւակի հողմավարն թևօք ասպատակօրէն անց գնաց 'ի տաճարէ աստի ամ մի նուիրական բաղդին Հայկայ և փառաց Ընմահին. բուռն հարաք ըստ մերս ուժոյ զսանձից ամանակին, զնա ինքն զկապտիչն կենաց կապտեցաք 'ի գանձուց որ առաւել է քան զկեանս, և պատրաստեցաք այնու փոքր 'ի շատէ արդիւնս գոյից 'ի վայելս ծնողին զմեզ Սորգոմայ և փափագողին մերումս վերածննդեան:

Յնծա՛յաւէտ անմահ հոգի ոստիկան Սորգոմեան գրոհի, յոր և դեգերիցիսդ 'ի վայր, թէպէտ 'ի սիրտս, թէպէտ 'ի Սասիս, թէպէտ յերկինս, ամբարձ զաչս քօ, նկատեա՛ առ ձեռն

զակումբս սիրարի համամիտ համա-
 ջան անձնանուէր քեզ և հովանացե-
 լոյն զքե Մտուծոյ . տէս զոր աստէն
 զհոյլ հնգից տասանցս դեռաբողջ
 ակնկալութեանց քոց զգաս դաս ա-
 շակերտաց , որք 'ի հեռուստ տնկողին
 մատամբ պսակ համասպրամ ծաղ-
 կանց բողորին զայրարատեանդ քո գա-
 հոյիւք . տէս և զվիճակակից սորին
 զայլ դարաստ 'ի նորն Մթէնս , որ
 թէպէտ և ոչ տակաւին ընդ հնծովքն ,
 այլ քաջ 'ի բաց ծածկի յուսովքն . տի
 օն անդր կարկառեանց հայեանց և յայս
 կոյս և յայն և յընդհանուր նուիրեալ
 քեզ կայս և գործարանս երջանկու-
 թեան քո . 'ի սուրբ և յիմաստապանծ
 վանորայս որք աստ նժդեհաբար վի-
 ճակեալք և որք անդ իսկ 'ի բնիկ սահ-
 մանս , 'ի վարժարանսն՝ որ 'ի յունա-
 կան ասիանց մինչև 'ի հնդկաց և 'ի
 Ահիւթաց սահմանս , 'ի տպագրա-
 րանս յոչ սակաւս 'ի հայաբնակ գա-
 ւառաց , 'ի ճեմարանս իմաստնա-
 տէնչս , յընկերութիւնս ազգասիրա-
 կանս , յառաքելութիւնս հոգեշահս ,
 յուզեորութիւնս բանասէրս , որոց
 ամենեցուն մի կէտ է նպատակի , քոյդ-
 բարելաւութիւն : Այնդա՛ մանաւանդ
 ընդ սերկեան երախայրիքս , ակնար-
 կեա՛ հաճութեամբ յակումբս պան-
 ծալի , որք 'ի հրճուելն ընդ առաջի-
 կայ շահս արդեանց՝ օրհնեն զքաջա-
 խոհ սերմանահանսն , զարս հոյակապս
 որք պատճառք եղեն մեզ իմաստնա-
 նարոյ և քեզ երանաւետելոյ :

Հայա տուր և ինձ զխնդութիւն
 և զեռանդն վսեմական կաճառոյս
 առնուլ օժանդակ և այս անգամ չա-
 փաւորութեան մտացս և պարապման
 ցըս , և դրուատս ինչ անպաճոյճս ձօ-
 նել , ա՛ , 'ի Վարերարան՝ որք իմաստա-
 սիրութեան ուսմանց յազգիս մերում
 բարգաւաճելոյ գտակք և պատճառք
 եղեն , և , ք , 'ի Սատարողս նոցին 'ի
 գունդ իմաստութեան վարդապետաց ,
 և ուղղաց տանց իմաստութեան , և
 ք , 'ի հետևողս անզուգական բարւոյն
 յերամն աշակերտութեան : Վովել

զերեսին ևս դասս և զպատշաճեալն
 նոցին պայմանս յանդիման կացուցա-
 նել իմ ջան , և եթէ ոչ վրիպիցիմ 'ի
 ցոյցսն՝ ամենեցուն 'ի նոյն թեակոխել
 լիցին պարտք :

Ա .

Եթէ աւագ որ աչօք նկատիցէ զար-
 դի ուսումնական տեսարան աշխար-
 հիս մերոյ , անշուշտ լուծեալ գտցէ
 զթանձրութիւն խաւարին տգիտու-
 թեան՝ որ 'ի դարուց հետէ համատա-
 րած իմն գոգցես քօղով պատեր զըր-
 նաւս . և թէպէտ ոչ 'ի սպառ հասա-
 րակեալ տունջեան , այլ լոյս իմն շա-
 մանդաղեալ որպէս յայգս խորին ընդ-
 գիշերայինսն մրցելով մառախուղս և
 տակաւ հալածական տանելով 'ի լայ-
 նածիր ոլորտից մերոց : Յայսպիսում
 միջօրեական սահմանի որդուց լոր-
 գոմայ տակաւին այլ ընդ այլոյ թուին
 դէպքն . կիսոց արդէն 'ի լոյս ճախրե-
 լով որպէս զերամն ծիծռանց առաւօ-
 տին անձկաւ ապաժոյժս , այլոց նովին
 անձկութեամբ առ նոյն դիմեալք ,
 թէպէտ և ոչ հասեալք . իսկ և ոմանց
 ոչ միայն 'ի խաւարին դանդաչեալ տա-
 կաւին , այլ և թափելոյ անտի ոչինչ
 ըղձակաթք : Մը 'ի պնդանի զառաջ-
 նոցն պահել զախորժակ և զտենչ
 երկրորդացն , և զվերջինքս 'ի նոյն
 կրթել , ոչ ինչ այնպէս 'ի դէպ և պատ-
 շաճ երեւի ինձ՝ որպէս քարոզել և հա-
 սու առնել նախ զամենեսին գեղոյ և
 օգտի և անզուգական շնորհի լուսոյն
 իմաստութեան :

Սմին և բարերարք իմաստութեան
 ազգիս քաջածանօթք լեալ՝ նախ զան-
 ձինս զինեցին 'ի սեր նորին , և ապա
 զազգայինսն համակ սպառազինել
 ջանացան . վասն որոյ և գլուխ գովես-
 տի նոցա այս իսկ թուի ինձ . քանզի
 ճանաչել զիմաստութի և իմաստուն
 լինել , մի և եթ եղև 'ի նոսա գործ , զոր
 օրինակ զլոյս տեսանել և լուսաւորիլ
 նոյն հետայն վճարիցի . վասն որոյ և
 ընդ գովեստ քաջի իմաստասիրի և ընդ

իմաստութեան չիք առ ինև իտիր . զի դրուատք գովանուոյն յոր ջանիւ մեծաւ կամ սաստիկ ըղձիւք ոք բուռն հարեալ եհաս՝ ինքնին բարձրացուցանէ զընկալուչն իւր :

Սակայն ինձ առաջի իմաստնախումբ կաճառոյս զիմաստութի հըռչակել յոյժ աւելորդ իմն է . իսկ եթէ ներէն , որպէս և այլ անգամ , անդրքան զակումբս զայս ձգել զբանս՝ ասացից 'ի կարճոյ . համայն և այնպէս ոչ զիմ բանս՝ որ կարի քաջ հեռի են յազնուութենէ ճառեալս խընդրոյ , ասացից 'ի բովանդակութիւն գովութե և մեծութեան սորա զբան վկայութեան այնորիկ՝ որում ամենայն տիեզերք պատկառ կան և սարսեն , զվկայութիւնն ասեմ Մտուծոյ : Օյի ոչ ինչ ոչ ուրեք այնպէս բարձրացուցանէ պանծացուցանէ և իւր բնական ցուցանէ բերանն յաւիտենական՝ որպէս զիմաստութիւն 'ի գերիմաստ տառս իւրաշունչ կտակարանացն . մանաւանդ թէ ընդ անձին իսկ իւրացուցանէ և անհետազօտելի երրորդականն միութե շողկապ զայն ունի բանիւն մշտնջենաւորաւ : Ինքնին յերկնէ վկայէ իմաստութիւն . " Ես 'ի բերանոյ Բարձրելոյն ելի " , և արարածք ամենայն խոստովանին զի " Եղլ է մշտնջենաւոր լուսոյն և " հայելի անարատ Մտուծոյ ազգեցուցութեանն " :

Իսկ եթէ ազնուութեամբ բնութեանն այսպէս , որքան զօրութեն և բարեօք 'ի յերկինս և 'ի յերկրի : — Հառաջ մատիր Սողոմոն , և դու որդիդ Սիրաբայ , անուանակիրք իմաստութեանն իսկականի , և բնութեն՝ մտօք հաղորդեալք առաւել քան զամ մարդիկ . բարբառեցարուք աստէն կամ տուք ինձ բարբառել զձեր բանս և զնոսին վեր 'ի վայր յեղլեղեալ յերկրել զխօսս իմ , և վեհագունիցդ մտօք յազթահարել զստորնոցս : Բնդ աստուածաշունչ սոցա տառս անցեալ հիանան և ինքնայորդոր վկայեն միտք , զի ոչ ինչ բարի և ճշմարտիւ

օգտակար եղև յաշխարհի առանց իմաստութեան և ոչ լինել ինչ կարէ : Ես միայն " Ս 'ի է և ամենայնի կարող " : Եւ որ բնաւ հանձար փոքր մի 'ի զնին կացեալ համօրէն օրինաց բնութեան՝ որ արտաքոյ և որ յանձին մարդոյ , ոչ գոչիցէ առ հաստիչ համագոյիցս , թէ " Իմաստութիւն մօտ " էր յորժամ առնէիր զաշխարհս " , նա և զիս գլխովին . զի սովաւ իմանամ պատկեր զիս լեալ արարողին իմոյ , և զսա միայն գիտեմ ակն և արեակ ամենեցուն որոց 'ի հողեղէն հովտացս յաշխարհն յաւիտենից ճանապարհ հորդել կամիցին : Հայիմ ընդ համօրէն գործս մարդկութեան և տեսանեմ զի " Եովաւ ուղղեցան շաւիղք երկրաւորաց " . նա ետ Մշամայ զտիրապետականն իշխանութիւն 'ի վերայ ամենայն շնչոյ . " Ես զնախաստեղծ զհայրն աշխարհի զմիայն " հաստատեալ պահեաց . . . նա ըզհեղեղեալ երկիր միւսանգամ փրկկեաց . . . նա և 'ի միաբանել ազգացն ծանեաւ զարդարն և պահեաց զնա անարատ Մտուծոյ . . . նա յաջողեաց Գալիբայ շահս 'ի վաստակոց իւրոց . . . նա զարդարն վաճառեալ ոչ եթող 'ի ձեռանէ , (այլ և) ընդ նմա էջ 'ի գուբ . . . նա անցոյց յԻսրայէլ ընդ ծովն Եփրատի և տարաւ զնոսս ընդ ջուրս բազումս " : Եւ բաւիցեմք մի առ մի յիշել և լսել որ սորա համօրէն հանգէսքն հրաշափառք . ո՞ ոչ խոստովանեսցի զի ամենայն ինչ մեծ և օգտակար նովաւ եղեն , և առանց նորա և ոչինչ :

Հաւատք ճշմարտութեանս արձանացեալ արմատացեալ կան յերկրի . թէպէտ և բազում անգամ ախտամոլին և հեղքն բնութիւն սքօղեաց և զգուեաց զիմաստութիւն , այլ զիսկալոյս ճաճանչ նորա ոչ կարաց 'ի սպառ շիջուցանել , և ոչ զխաւար ընդ նորա փոխանակել . նա՛ մանաւանդ վկայք մեծութեան նորա յՄշամայ սկիզբն առեալ՝ ոչ սպառեցան մինչև

այսր : Դախահայր բնութեանս մերոյ
 և նահապետքն որ ըստ նմանէ՝ բուռն
 հարին տածել զսորա գեղեցիկ գիւ-
 տրս . մինչև չարին հակառակեալ բը-
 նութեանս՝ աճեցոյց զմեղս և յառաջ
 քան զջուրսն նովաւ ողողեաց զաշ-
 խարհ , յորում ժամանակի միոյ առն
 իմաստութիւն փրկեաց զաշխարհ ՚ի
 կրկին հեղեղացն , և ընդ սերման կե-
 նաց պահեաց նորածնեալ աշխարհին
 զսերմն իմաստութեան : Օր և ՚ի
 բաժանել և ՚ի ցրուել ազգացն ա-
 ուին օժանդակ կայկայել զգեռ ան-
 կայուն ժողովս իւրեանց , որով առա-
 ջին պետութիւնքն անուանիք կանդ-
 նեալ կացին : Թողից աստանօր յիշել
 զնոցա զհնագոյն իմաստութեանցն
 արձանս . զՊրահմային Հնդկաց ըզ-
 քառամասնեայ վետայս , որ զերիցու-
 թիւն լեզուի և զգարութեան կապ-
 տել համարձակի ՚ի հանուրց ազանց .
 և զԲակտրիացի Օրագաշտական
 Սենտիտատս՝ որ գլեն զհնութիւն Պար-
 սից և զՍարաց , և զաշակերտութիւն
 նմին նախնի թագաւորացն Պարսից
 մոգուցն սատարութեամբ . կամ զոր
 ՚ի Փարաւոնեան աշխարհին հանգոյն
 իմն պարսկականին վարժք կրթու-
 թեանց թագաւորաց և քրմաց . և
 զվեհագունիցն յիմաստս Ելենացւոց
 ազանց զամենահամ վարժեար , այ-
 լովքն հանդերձ հնագոյն ազամբք .
 յորս այս ինչ քաջայայտ երևի , զի
 որք անդուստ ՚ի սկզբանէ զիմաստու-
 թեան ջահս առաջնորդ կալան յըն-
 թացս քաղաքավարութե իւրեանց ,
 նոքա ՚ի կրթութիւնս յառաջեցին .
 իսկ որոց անփոյթ արարեալ զնովաւ ,
 խժական և անասնական վարուք ձգե-
 ցին զժամանակ իւրեանց :

Բայց ՚ի մերս դարձցուք հայրենի
 գաւառ ուստի ելաքն , և զոր ՚ի
 գրոց սրբոց և յարտաքնոց տեսանեմք
 կրկին անգամ խանձարուրս լեալ կե-
 նաց և մտաց մարդկութեան : Բն
 ինչ ստորաքարչ մերժեալ ջուրցն՝ յայ-
 րարատեան դիտակաց , գագաթնա-
 զեղ որպէս յՆերմոնէ իջին տա-

րափք իմաստութեան ՚ի դաշտս Սա-
 սեաց և ՚ի հովիտս Լորպատականի
 և անդուստ ծաւալեցան ՚ի Բակ-
 տրիացւոց և Ելենացւոց աշխարհս և
 ՚ի Հնդկիս և այլուր : Ի համայնա-
 ջինջ կորստենէն թափեալ Երջի զնա-
 խահարցն գիւտս մտայ և յաւելեալ
 զիւրայինան , էր զոր յաւանդ բանի ,
 էր զոր յարձանս և էր զոր ՚ի դիւանս
 ինչ ըստ այնր ժամանակի նշանագրացն
 դրոշմեալ , յանձնէր ընտրելոյ որդւոցն
 պահել յերկրի անդ նախնոյ բնակու-
 թեանն յիշատակ յաւիտենից : Բ-
 տուածախառն աւանդքն ծրարքն այն
 ապագայց իմաստից , նախատիպք ա-
 կադեմեայց և լիկէոնից՝ հանգոյն տա-
 պանին իջին բնակեցան ՚ի բարձունս
 Հայոց . յառաջապահ կարգեալ նոցին
 Եակաց մերոց հնագոյն քահանայից
 տային օրէնս աշխարհի . ՚ի բազմանալ
 մարդկան՝ և աղմկաց ընդ նոսին նա-
 խանձու և բռնութեամբ հանդերձ ,
 նիւթք կամ բովք իմաստութեան յարս
 սակաւս ապաստան լինէին , և կերպա-
 րանէր մոգութիւն կամ քահանայու-
 թիւնն վերակացու դիւանաց . որով
 և ընդ սրբազանսն գրէին տառքն՝
 ծածկութեանն քօղով խորհրդազգե-
 ցիկք : Եւ թէպէտ զնոսա իսկ կամ
 ժամանակն կամ նախանձ ազանց օձ-
 տելոց յԱրարատայ՝ թագոյց և զրա-
 ւեաց ՚ի ծերպս և ՚ի խոուոչս և ՚ի գե-
 րեղմանս ուրեք , ոչ ինչ ընդհատ և
 զոր զկնի նոցին արձանացան դի-
 ւանքն , այլ անգիր զրոյցք և երգք վի-
 պասանից յաւուրցն Հայկայ ցաւուրս
 Սահակայ ոչ լուեցին ՚ի հնչեցուցանե-
 լոյ զհովիտս և զբլուրս Հայաստա-
 նեայց . հոմերական հագներգուք Բ-
 րամազնեայցն բամբռանց մրցօղք՝ ան
 մահ վկայք են հայկական զգաստ ա-
 խորժակաց յիմաստս բանի :

Երջն ախորժակք մշտավառ տեսան
 անդանօր յամենայն դարս նախնի . զի
 հուպ ընդ հուպ զհետ կործանման
 հայկազանց գահուն և կերպարանա-
 փոխ լինելոյ օրինաց աշխարհի ՚ի Սա-
 կեդոնական բռնութենէն , աչալուրջ

նտխարարք մեր զվսեմական լեզուն
 Յունաց ածին լծակից վսեմագունին,
 և օժանդակ լուման տառիցն թերու-
 թեան և օրինաց երկրին . որով լե-
 զուաւ Մըշակունիք զարգացուցին 'ի
 մեզ զուսմանց գեղեցիկ վարժս, և
 արահետ արարին զճանապարհս Մ-
 թեան և յետագայից իւրեանց ցբա-
 զում ժամանակս : Մյ խիթամ յեր-
 կարութենէ ճառից եթէ 'ի դրուատ
 նախնեաց իմաստասիրաց մերոց կա-
 միցիմ յիշել զպարծանս Տիգրանայ և
 զՄտաւազդայ, զՄբգարուն և զՄր-
 տաշիսի, զՄրիդորին և զՏրդատայ,
 զՄերսիսի և զոր առ նովաւ հելլենա-
 սէր մանկուոյն . կամ զԷս հրաշափա-
 ռագոյնսն զՄռամշապհայ և զՄահա-
 կայ և զմեծին Մեսրովպայ, որք զճը-
 րագ լուսոյն իմաստութեան յաշտա-
 նակի կառուցեալ 'ի բարձու զՅու-
 նաստանն զՏին և զնոր, զՏում և
 զՄսորիս, զՓիլենիկէ և զՊաղեստի-
 նացւոց աշխարհն, իմաստնայեղցն Մ-
 զիպտոսիւ հանդերձ՝ արբանեկեցին
 Տայկեան իմաստախնդիր ոգւոց : Ի-
 ցիւ թէ անյեղլի բաղդին երկնից
 դամ մի շեղիլ յանձն առեալ էր յայն-
 ժամ և զհնգեակ դարս Մըշակու-
 նեաց մերոց՝ նոր նորոգել յետ գիւտի
 հայկականս տառից, կարծեմ թէ ոչ
 Մըքսանդրիա պարծէր հարստագոյն
 համբարանոց ունել մատենից, և ոչ
 Մթէնք միշտ իմաստութեանց եղեալ
 դայեակ, և ոչ վրէպ գտեալ 'ի հան-
 դիտապատիւ փառաց արդեացս Մու-
 տետիոյ և Մոնդինոնի և Մերոլինայ,
 մերոցս Մդեսիոյ և Մաղարշապա-
 տու, Մեղարքունեաց, Մըշարունեաց,
 Մաքենոցաց, Մպրեվանաց, այլովքն
 հանդերձ :

Մյ զհետ գեղեցիկ անուանցս և
 յաջողուածոց՝ հարկ է զաւաղականն
 կարգալ և զգժնդական յիշել արկածս :
 Օր պայծառագեղ տիւն իմաստութե
 կարճատեցաւ 'ի Տայաստանէ, և գի-
 շեր տգիտութեան թանձրամած հաս
 կալաւ զաշխարհն յոյժ ընդ երկար .
 թուէր իմն թէ ընդ բեկանել ար-

քայաշուք գաւաղանին Մեոնի՝ փը-
 չեաց մուսայն Տայոց զճահ իւր և
 նստաւ 'ի սուգ : Բազմաղէտ անշքու-
 թիւն ազգիս 'ի բունութենէ օտարաց
 անյուսալի իմն առնէին այնուհետեւ
 զգարձ նախնոյ վայելութեանն, և
 մերթ լքուցանէին զձեռս, մերթ 'ի
 դերև հանէին զճանս որոց համարձա-
 կէինն ձեռն տալ իմաստասիրական
 հանդիսի, կամ մանկանց վարժարա-
 նօք կամ վարդապետարանօք, կամ
 զնախնեացն վաստակս 'ի ձեռն մամ-
 լոյ բազմացուցանելով . որովք հազիւ
 հազ երբէք կայծ ինչ ընդոտուցեալ
 կամ փայլակն 'ի քթթեւ ահան շո-
 ղեալ և շիջանէր յայնքան թանձրու-
 թեան խաւարին : Համապայծառ ա-
 րեգական կարօտէր աղջամուղջն հա-
 մատարած . գետոյ անարւոյ՝ 'ի տա-
 պալել զանմտութեանն թումբ . լայն
 և բորբոքեալ սրտի առ 'ի կրել զայն-
 քանոյ բազմութեան երաշխէպս, և
 վառել 'ի հուրն որով ինքն տոչորի-
 ցի . կամ թէ ինքնին երկնից անկ էր
 միւսանգամ ազդել 'ի գործարանս
 սրտի նորոյ Մեսրոպայ ոչ ևս 'ի ստեղ-
 ծուած նորոց տառից՝ այլ նորոց ի-
 մաստասէր մտաց : Եւ երկինք միշտ
 յանյուսից և յանկարծից ամենահնար
 այցելուք մարդկան, զոր ինքեանք
 միայն կարէին՝ հաճեցան շնորհել մեզ
 զանուանակիրն բարեաց գործոց իւ-
 րոց և մերոյ կարօտութեանս, զսքան-
 չելին Մխիթար :

Մխիթար . . որ սիրտ հայկազնեան
 ոչ թնդայցէ յուսով յայս անուն .
 Մխիթար 'ի յաւիտենից պահեալ 'ի
 ծածուկ գանձս աստուածութե ընդ
 ոգւոցն այնոցիկ, որոց գալուստ յաշ-
 խարհ՝ կերպարանափոխութիւն է աշ-
 խարհի : Սակայն զՄխիթար դրուա-
 տել ոչ այնքան ամօթխածութիւն
 վասն իմոյս հոգևոր ազգակցութեան,
 յորմէ քաջ 'ի բաց զատուցանէ զիս
 անձինս անարժանութիւն, քան թէ
 ճառից երկարութիւնք և այլոցն բա-
 րերարաց ստուերածք, և մանաւանդ
 իմ առ մեծութիւն վեհին գործոյ

անհասութիւն, կասեցուցանեն ատանօր, և հեզաբար մատուցումն ըսքանչանաց յորդորեն բերել: Սակայն թէ իմ լուէ բերան, քարինք անգամ աղաղակեն տիրահրաւէրք. վէմք Սասեաց գոչեն, Սխիթար նոր աղեղն հաշտութեան կախեցաւ զբարձր գագաթամբս, և յերփնունակ հիւռութեանցն ճաճանչք սփռեցան բովանդակ 'ի Հայս. մանկունք դիեցիկք կաթին գիտութեան գոչեն, սնունդս այս 'ի Սխիթարայ քրտանց մեզ շահեցաւ. անիմաստք գոչեն, թէ Սխիթար չէր՝ և ոչ զհեղգութիւնս մեր իմանալ կարող էաք. և գիտունք, թէ նախաշաւիղք ձեմից մերոց Սխիթարայ ձգամբք հորդեցան. աշխարհս համօրէն նոր զոմն Պառմիթևս կարծէ զնա սրբազանի հրոյն գտակ: Ղամբանք բացեալ աղաղակեն և երկինք ձայն տան. Սեսրոպ Սահակաւ վկայէ, թէ սա մեր վաստակոցս է կցորդ. Սովէս անխոնջ աշակերտակցօքն, թէ սա մերոց ջանից նորագող շքմարիտ. Լբգար, Լրտաշէս, Տրդատ, Սուամշապուհ հիացեալ ասեն, որպէս սա զոր մեք հազիւ իշխանական պերճութեամբս կարէաք, անինչ անզօր անօգնական անձեռնտու, այլ մանաւանդ և հոյս անհունս ընդդիմակաց գտեալ՝ անդուլ անխուով յառաջ վարեալ 'ի գլուխ տանի զգործ, զոր յետ մեր բազում թագաւորք և հայրապետք առնել ոչ յաջողեցան. արդէն պարզեաց նա ընդ երկին զդրօշ բարեկեցութեան ազգին իւրոյ և երանի թէ բոլոր զինուորէին նմա, գրեալ 'ի վերայ, "ԻՄԱՍՏՈՒԹԵԱՄԲՆ ԼՍՏՈՒԾՈՅ", և ահա յամենայն ծագաց, յոր սփռեալս են տարաբաղդիկ մանկունք մեր՝ խոստովանութիւնք երախտեաց լին գերագունի բարերարին իւրեանց: Սակայն և այնպէս բազմադարեան ամաց պէտք իցեն Սորգոմայ առ 'ի զսորա բովանդակ զգառս մեծութեն ճանաչել, և սոսկմամբ իմն սխրացեալ ընդ նա՝ մերթ փոքրկացուցանել ոչըն

չացուցանել զանձն առաջի նորա, մերթ նովաւ մեծացեալ ամբարձեալ հսկայաբար ականել 'ի վերայ եւրօպական մարզից: Սչ ապաքէն իւրաքանչիւր 'ի հոյակապ հայկազանց հանդիսացեալ կայցէ յԱջատ դարեւանդին, Տիգրանքն և Սողարշակք, թագաւորքն քրիստոսապսակք և Վրիգորեանք և Վերսիսեանք, Սեսրոպեանք և Սահանեանք, և յառաջամատոյց բնաւից աստուածակերպս այս այր կառուցեալ յաւետաճաճանչ պրսակաւն դերափայլեալ լուիցէ 'ի նուիրակէս մերմէ 'ի խորենեան ոգւոյն, թէ "Յայտ է ուրեմն թէ ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն և բարձրագունից արժանաւոր գովութեանց": Լյո՛, վսեմախումբ ատեան, փառք Սխիթարայ այնպիսիք են՝ ընդ որս և ոչ այնքան մարթ է նախանձ բերել որքան զարմանս ընծայել և գերագունին նորա ցանկալ հովանաւորութե: Վանգի յաստուածուստ իջեալ որպէս վարիչ հուժկու երկոքումբ քրկօք աստուածաբաղձ և իմաստնատենչ ջանիցն բուռն հարեալ՝ զսեւեւեալ անուոց մտաց և բաղդից Հայկայ՝ խլրտեցոյց շարժեաց 'ի գնացս կացոյց ընդ դժուարուտն՝ զամենաշարժ հոգին իւր անիւ յանուի անդ շարալծեալ: Սչ յապաղեցին արդիւնք ջանիցն Սխիթարայ արգասաւոր լինել և նախկին շարժմանն փոխանցիկ յայլս գուժառանգորդք հոգւոյն հօրամոյն աշակերտքն սահեալ գնացին ընդ ոլորտս հայասփիւռ կողմանց, և զստուերանստաց ժողովրդեանն զգլուխս 'ի վեր առեալ ցուցանէին զլուսաւոր դրունս իմաստութեան և սրբութեան: Ինոցանէ սահարկեալ առաքինեաց ոմանց ընդ ահագին դաշտս ովկիանու՝ յայց մերազնեայցս ելանէին վաճառականութեան աղաքաւ գաղթելոց 'ի Հնդկային ափունս, և զաննիւթական վաճառս իմաստութեան փարեթցուցանէին: Վարւոյն ազգման դիւր

ընկալք սիրտքն բարեգութք առին զխանձ ազգասիրութեան և իմաստա սիրութեան, և յանկարծոյն բորբոքեցան, և հուր գեղեցիկ վառման ազգին իւրեանց նիւթեցին Սուրան և Սափայէլ. ետուն մասն 'ի սնտոի վաճառուց քնել իւրեանց զմիակ մարգարիտն պատուական: Պատրոյգս իմն հզօրս գտեալ զվարդապետն՝ յորոց ձեռն ազդեցաւ 'ի նոսա խորհուրդն կենսաբեր՝ հանգա նակեցին զիւր արծաթոյն ընդարձակագոյնս տարածել զլոյս յազգի անդ իւրեանց. թռուցին զմտաւոր զամբարսն յաշտարակս բարձունս՝ լուսատու լինել պարապայ կողմանց. զաւազն ոսկեղէն (զի ոչինչ առաւել է քան զայն յորժամ անգործ կայ ոսկին), փոխեալ 'ի քարինս ոսկեղէնս, հիմն արկին տաճարաց երկնաբերձից որ զանունն ուոցին յաւիտեան կրեսցեն: Ընուանքն այնոքիկ յափշտակեալք 'ի խռանէ հոմացեղիցն, աջակցեալք լի համօրէն որ առ նոքօք և որ յետ նոցա բարերարացն իմաստութեան, ընդ Երզնկայեանս և ընդ Երուստիեանս և ընդ ամենայն հետեւողացն ուոցին՝ որք ցայսօր աճեցուցին զվարժարանս և զվարժողս, հատցեն անցցեն զազգս և զգարս. մինչդեռ անփառունակ կի՞ սակաւայուշ կացցեն յոգնաթիւ վաճառականք և հնարագէտ արուեստաւորք, քաղաքագէտք և զօրավարք, որք և 'ի յետին դարս մեր նշանաւորք եղեն 'ի դրունս օտարաց կամ առտնին, այլ ոչ անդր քան զանձինս իւրեանց ձգեցին զսէր շահուն, վրիպեալք 'ի յարգելոյ զարծաթ իւրեանց ողորմութեամբ և ազգասիրութեամբ, որով ընդ միոյ վաթսնաւոր և հարիւրաւոր շահեալ էր արդեօք նոցա. և ընդ միոյ կամ երկոց որդւոց կամ ապերախտ ժառանգաց՝ զազգն համօրէն որդեգրեալ և ժառանգ և երախտեաց պարտական կացուցեալ էր մինչև ցյաւիտեան. իսկ սոքա թէպէտ և ոչ քաջիկ ճաշակեալ զոր համազգեացն պատրաստեին զմեղը իմաստից, այլ

քաջ իսկ քաղցրութեան նորա 'ի վերայ հասեալ, վասն որոյ և արժանապէս ընդ իմաստունս դասեցին. «Վան, զի և զմտաւ ածելն զնմանէ, ասէ,» կատարեալ իմաստութիւն է,»:

Եւ եթէ խորհելն զիմաստութենէ այսու օրինակաւ իմաստութիւն իցէ, քանիօն առաւել ընդ խորհրդեան և զգործն վճարել, յաղթեալ բազում դժուարութեանց և զմեծ կարօտութիւնն լցուցեալ. որպէս և արարին իսկ դրուատեալքս առ 'ի մէնջ: Վան, զի ճանապարհ բացին ազգին ճանաչելոյ զանձն, ուսուցին նմա խորշել 'ի վտանգէ չարեացն յոր անուսումնութեամբն ընթանայր, և 'ի վերահաս վտանգէն՝ իմաստութեանն սատարութեամբ ելս գտանել այսուհետև: Սոքա զկորովի հանձար հայկական՝ որ զօրինակ գետոյ մոլորելոյ վայրավատին ընդ ամայիս յածեալ և ճղճղկէն կոտորեալ զանխլաբարն ընդաւազէր, ընդ հուն գեղեցիկ ուղղեցին 'ի դաշտս իմաստութեան անթառամ և անուշահոտ ծաղկամբք պճնել զխոպանացեալն Երարատ. սոքա վերբուտին նորոգեցին զգարս Վրիգորի և Սահակայ, վերստին զԵթենական մրցանակսն, և զպսակագեղ նազանս Վաւթեանց և Վարուրից 'ի հոյլս օտարասեր համբակաց. սոքա միւսանգամ ազգարանք եղեն Երից՝ գերեզարձ փառացն առնել նախնականացն:

Օ իմրդ լուել աստանօր և զգեղեցիկ և զքաջախոհ հնարագիտութիւն բարերարացս 'ի համօրէն բարգաւաճանս ազգին. զի ոչ փոքր իմաստանցան 'ի տալն՝ որքան յընտրութեան առողացն և 'ի մատակարարութեանն. զի հասարակաց գիտելով զաղէտս տրգիտութե՝ աղքատաց յաւէտ զձիրսն սեփականեցին: Եւ կարի իսկ քաջ. նախ զի ողորմութեանն անթերի փայլեսցէ գործ, և երկրորդ զի մի անտերունչքն և զրկեալք յընչից՝ զուրկ մնայցեն և 'ի մտացն գանձուէ: Վան զի ճախից հնար էր 'ի կամելն դիւրաւ պաճա-

րել զգիւտս ինչ իմաստից և դպրու-
թեան . իսկ աղքատաց հարկ լինէր
զարծաթն կարծել գինք իմաստու-
թեան , և առ 'ի չգոյէ նորին՝ մը-
նալ 'ի խաւարն առաջին : Այս և ա-
ռաւել ևս . զաղքատս մեծացուցանե-
լով ճշմարիտ մեծութեամբն՝ թա-
փէին զնոսա 'ի բռնութի և 'ի ստոր-
կութենէ մեծատանց , և մարտնչէին
ընդ պայազատական շքոյն յօրանաց ,
յորմէ այնչափ աղէտք մտին և 'ի մերս .
և յօտար աշխարհս : Այլ 'ի վերայ այ-
սորիկ զմեծատանցն ևս ճարտար փոյթ
ունէին . զի ձեռն յաղքատս տուեալ՝
զմեծատունն շարժէին սթափեցու-
ցանէին երկեցուցանէին , գուցէ՞) Աս
,, ռայք իմաստունք տիրեսցեն տերանց
,, անմտաց ,, . բռնադատէին իմն զնոսա
յօժարել տալ զարծաթ զեղծիչ ազ-
նուութե իւրեանց և գնել զանկռե-
լի մեծութին . այնու և զմիաբանու-
թեան հոգին տնկէին յազգին , կամ
մտօք հաւասարեալ աղքատաց և մե-
ծատանց , կամ 'ի դպրոցի միաբան
քաղաքավարեալ և հաւասար օրինօք
սնեալ սիրել զհաւասարութիւն :

Յայս սակս խոհական բարերա-
րացն փոյթ եղև վարժարանս ազգային
լեզուաւ կարգել . զի որպէս բազում
չարեաց պատճառք լեզուն է , նոյն և
բարւոյ ազգին և նորին սիրոյ աճե-
լութեան : Արանդի օտար վարժա-
պետք թէ շատ՝ խնամակալ և եթե
աշակերտացն , իսկ ազգայինն հայր և
դայեակ . նոքա ձեռամբ՝ սա սրտին
ջամբէ . նոքա բազում այն է զի վարձ-
կանք են ըստ Տեառն բանի , իսկ սա
հոյիւ ճշմարիտ՝ որ ոչ խնայէ յանձն վս
հօտին սիրելոյ , և ոչ ինչ պակաս 'ի
համօրէն հօտէն սրտաբեկ լինի ընդ
զարտուղել և միոյ գառին :

Այլ մեծագոյն ևս բարիք բարերա-
րացն իմաստութեան այս են , զի ընդ
աղբերն դտին և զագուգայս դիպան
'ի հանապազագնաց յառաջատու թի
ջուրցն ամբարեւոյց . այսինքն են Սա-
տարողքն իմաստութեան , ոստիկանք

վարժարանաց , զորոց ահա բունն
հարկանեմ ճառել :

(ԱՒԱՐՏԵ ՅԱՌԱՋԻՎԱԾԱՅ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Արոսաղէփ սուրբ (Յարութեան եկեղեցին) :

ԱՐՈՒՍԱՂԵՄԻՍՈՒՐԵ (Յարութեան
եկեղեցին խիստ մեծ ուխտատեղի է
ամենայն քրիստոնէից . ասիկայ իրեք
եկեղեցիէ ձևացած է , սուրբ Յա-
րութիւն , Գողգոթա և Խաչգիւտ :
Ը կնքը խիստ հին է . այնչափ որ ու-
մանք կ'ըսեն թէ Տիտոսի Արուսաղէ-
մը կործանելէն քառասունուվեց տա-
րի ետքը քրիստոնէայք հրաման ուզե-
ցին Ագրիանոս կայսրէն որ Վրիստո-
սի գերեզմանին վրայ եկեղեցի մը շի-
նեն , կայսրն ալ հրաման տուաւ . ետ-
քը սուրբ Հեղինէ Աոստանդիանոսի
մայրը ան եկեղեցին մեծցուց կ'ըսեն .
բայց աւելի հաւանական կ'երևնայ
թէ աս եկեղեցին սուրբ Հեղինէ ին-
քը շինած ըլլայ : Օ արմանալին ան
է որ այնչափ աւերմունքներէ ու պա-
տերազմներէ ետքը ինչուան հիմա
կարծես թէ իր առջի տեսքը պահած
է . և թէպէտ աս դարուս սկիզբը կը-
րակէն այրեցաւ , բայց դարձեալ մեծ
ջանքով շինեցին ճիշդ առջի ձևովը :

Ը աթոպրիան գաղղիացի երևելի
մատենագիրը Արուսաղէմի կողմերը
ճամբորդութիւն ըրած ըլլալով՝ այս-
պէս կը ստորագրէ աս եկեղեցին .
« Սուրբ Յարութեան եկեղեցին ան-
,, հարթ գետնի մը վրայ շինած է ,
,, կ'ըսէ , ու մէջը կանթեղներ ու ջա-
,, հեր կը վառին միշտ , եկեղեցին ալ
,, մթնկեկ ըլլալով՝ մարդուս ջերմե-
,, ռանդութիւնը կը շարժէ : Օ անա-
,, զան ազգաց քահանաները աս եկե-
,, ղեցւոյս մէջ դաս դաս կեցած՝ զ՛ս-
,, տուած կը փառաբանեն . լատին